

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Եղեգնուտ, 1Փ 9Շ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 Հուլիսի 2016թ.

ԹԻՎ 25-Ա

ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ԼԻՍԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հաստատել Եղեգնուտ համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 8-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ(5)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆԸՊԱՀ(0)
Է. Արրահամյան		-----	/ ստորագրություն/-----
Ա. Խաչատրյան		-----	/ ստորագրություն/-----
Ս. Կարապետյան		-----	/ ստորագրություն/-----
Վ. Մարգարյան		-----	/ ստորագրություն/-----
Ա. Ռաշոյան		-----	/ ստորագրություն/-----

Համայնքի ղեկավար Ռ. Մարգարյան

Հավելված  
Եղեգնուտ համայնքի ավագանու  
2016 թ-ի հուլիսի 8-ի թիվ 25-Ա որոշման

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Եղեգնուտի ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒԼԻՍԻ 8-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ,  
ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐՈՒՄ ԱՆՑԿԱՅՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ  
ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ /ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ/ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ  
ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ  
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:


6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՅԻ» ԿՈՉՈՒՄ  
ՇՆՈՐԸԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ  
ԿԱՆՈՆԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Եղեգնուտ, 1Փ 9Շ ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 Հունիսի 2016թ.

ԹԻՎ 26-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի հաշվետվությունը հողային ֆոնդի առկայությունը և բաշխումը ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, համայնքի ավագանին **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի ղեկավարի հաշվետվությունը հողային ֆոնդի առկայության և բաշխման ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների համաձայն հավելվածի (Ձև 22):
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝


	ԿՈՂՄ(Ֆ)	ԴԵՄ(Ո)	ՁԵՌՆՊԱՀ(Ո)
Է. Արրահամյան		-----	/ ստորագրություն/-----
Ա. Խաչատրյան		-----	/ ստորագրություն/-----
Մ. Կարապետյան		-----	/ ստորագրություն/-----
Վ. Մարգարյան		-----	/ ստորագրություն/-----
Ա. Ռաշոյան		-----	/ ստորագրություն/-----

Համայնքի ղեկավար Ռ. Մարգարյան









ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Եղեգնուտ, 1Փ 9Շ .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 Հուլիսի 2016թ.

ԹԻՎ 27-Ն


ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՅՄԱՆ,  
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ  
/ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ/ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի, 14-րդ հոդվածի 6-րդ կետի, 23-րդ հոդվածի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Եղեգնուտի համայնքի *ավագանին որոշում է*

1. Հաստատել «Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդի անցկացման, հողամասերի ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու կանոնակարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի ղեկավար Ռազմիկ Արամայիսի Մարգարյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	ԿՈՂՄ(Տ)	ԴԵՄ(Ո)	ՁԵՌՆՊԱՀ(Ո)
Է. Արրահամյան		-----	/ ստորագրություն/ -----
Ա. Խաչատրյան		-----	/ ստորագրություն/ -----
Մ. Կարապետյան		-----	/ ստորագրություն/ -----
Վ. Մարգարյան		-----	ստորագրություն/ -----
Ա. Ռաշոյան		-----	/ ստորագրություն/ -----



Համայնքի ղեկավար Ռ. Մարգարյան

## Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԿԱՍ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ /ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ/ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով կարգավորվում է Կազմակերպչի կողմից հրապարակային աճուրդների միջոցով գույքի, գույքային իրավունքների իրացման գործունեությունը:

1.2. Սույն կանոնակարգով չի կարգավորվում փակ աճուրդների կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

1.3. Սույն կանոնակարգով սահմանվում են աճուրդի ձևերը՝ դասական կամ հոլանդական:

1.4. Աճուրդի միջոցով պայմանագրեր կնքելու պայմանները սահմանվում են օրենքով, իսկ աճուրդների ընթացքում վճարները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

#### 2. ԱՃՈՒՐԴԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒ ՄԱՍՆԱԿԻՑ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

2.1. Աճուրդը պետք է սկսվի 9:00-19:00 ընկած ժամանակահատվածում, իսկ վաճառքը պետք է իրականացվի հրապարակային ծանուցման մեջ նշված օրը:

2.2. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի զանգվածային լրատվության միջոցներով կամ էլեկտրոնային միջոցների օգնությամբ հրապարակային աճուրդի օրվանից առնվազն 15 օր առաջ, եթե վաճառվող գույքի աճուրդով իրացման համար օրենսդրությամբ այլ ժամկետներ սահմանված չեն: Հողամասերի, ինչպես նաև հողամասերին ամրացված շինությունների աճուրդի մասին հրապարակային ծանուցումը բոլոր դեպքերում պետք է կատարվի հրապարակային աճուրդի օրվանից առնվազն 30 օր առաջ, իսկ կրկնաաճուրդի դեպքում հողամասերին ամրացված շինությունների աճուրդի մասին հրապարակային ծանուցումը կարող է կատարվել նաև հրապարակային աճուրդի օրվանից առնվազն 15 օր առաջ:

Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը աճուրդի կայացման օրվանից

առնվազն 10 օր առաջ գետեղվում է աճուրդի կայացման վայրում:

2.3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի օրենքով սահմանված տեղեկությունները:

2.4. Հրապարակային ծանուցմամբ կարող է նախատեսվել աճուրդի հաղթող համարված մասնակցի կողմից իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումարի վճարում (30 րոպեի ընթացքում), որը հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ. իսկ սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հետ չի վերադարձվում:

Հրապարակային ծանուցմամբ կարող է նախատեսվել նաև աճուրդի մասնակցի կողմից լուտի մեկնարկային գնի առնվազն 5 տոկոսի չափով գումարի վճարում որպես նախավճար, որը աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է աճուրդի ավարտից հետո 24 ժամվա ընթացքում, իսկ հաղթող մասնակցի համար հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ և սահմանված ժամկետում ամբողջ գումարի վճարումները չկատարելու դեպքում հետ չի վերադարձվում:

Աճուրդի մասնակցության համար վճարը յուրաքանչյուր աճուրդի համար սահմանում է համայնքի ավագանին, սակայն ոչ ավել 5000 ՀՀ դրամից:

2.5. Գույքի վիճակի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հրապարակված տվյալների անճշտության համար Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում. եթե անճշտությունը չի կատարվել իր կողմից:

2.6. Մույն կանոնակարգին կարելի է ծանոթանալ աճուրդի կազմակերպման վայրում աճուրդը սկսվելու պահից առնվազն 30 րոպե առաջ: Կանոնակարգը տրամադրվում է համապատասխան դիմումի հիման վրա. որի համար Կազմակերպիչը պահանջում է պատճենահանման համար նախատեսված ծախսերը:

2.7. Աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները կատարվում են օրենքով սահմանված կարգով:

2.8. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք (այսուհետև՝ դիտորդ) աճուրդի դաիվում զբաղեցնում են առանձին նստասեղեր: Աճուրդի մասնակից չհամարվող անձանց (դիտորդի) համար ընդհուպ աճուրդի սկսվելը վաճառվում են դիտորդի տոմսեր:

2.9. Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին.

ա) չհայտնել իրենց դժգոհությունը, սպառնալիքը կամ գոհունակությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդի կազմակերպչի կամ աճուրդավարի գործողությունների նկատմամբ.

բ) չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված դեպքերի.

գ) հարցադրումներ ուղղել աճուրդավարին՝ լուտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո. իսկ լուտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ:

դ) աճուրդի ընթացքում դուրս չգալ դաիվից կամ չվերադառնալ դաիվ՝ բացառությամբ ընդհանուր աճուրդի դեպքում լուտերի աճուրդների միջև ընկած ժամանակահատվածի՝ աճուրդավարի թույլտվությամբ.

ե) չթաքցնել օրենքով սահմանված՝ աճուրդավարի կամ նրա ամուսնու սզգակյան լինելու հանգամանքը :

### 3. ԱՃՈՒՐԴԻՑ ՀՐԱԺԱՐԿԵԼԸ



3.1. Աճուրդի բացմանը նախորդող երեք օրվա ընթացքում աճուրդից հրաժարվելու դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է հատուցել մասնակիցների կրած իրական վնասը:

3.2. Եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա կազմակերպիչն աճուրդից պարտավոր է հրաժարվել, եթե՝

1) առկա է սեփականատիրոջ (իրավատիրոջ) գրավոր դիմումն աճուրդից հրաժարվելու վերաբերյալ, եթե աճուրդի անցկացման մասին պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2) լոտը կամ դրա մի մասը ներառված է սնանկության հետևանքով լուծարվող իրավաբանական անձի կամ անվճարունակ ճանաչված ֆիզիկական անձի գույքի կազմում:

3) առկա է դատարանի որոշումը լոտի վաճառքի սահմանափակման վերաբերյալ:

3.3. Կազմակերպիչը կարող է աճուրդից հրաժարվել, եթե աճուրդ առաջարկողը խոչընդոտներ է ստեղծում լոտն ուսումնասիրելու համար:

3.4. Աճուրդից հրաժարվելու մասին ծանուցումը պետք է արվի այնպես, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

#### 4. ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿԻԿՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԵՐԸ ԵՎ ԼՈՏԻ ՈՒՍՈՒՆԱՍԻՐՈՒՄԸ

4.1. Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ կամ ծանուցման մեջ նշված ժամկետում, չափով և կարգով Կազմակերպչին մուծել են նախավճար (որի չափը չի կարող գերազանցել աճուրդում վաճառվող ամենաբարձր մեկնարկային գին ունեցող լոտի մինչև 5 տոկոսը) և ստացել մասնակցի վկայական:

4.2. Նախքան աճուրդի բացումը մասնակիցները պետք է հնարավորություն ունենան ծանոթանալ աճուրդի ծանուցման մեջ նշված վաճառվելիք լոտին (լոտերին): Կազմակերպիչը ծանուցման պահից սկսած (Առաջարկողի աջակցությամբ) ընձեռում է հնարավորություն լոտը (լոտերը) ուսումնասիրելու համար՝ հետևյալ կարգով և ժամկետներում.

ա) անշարժ գույքի համար՝ հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի):

բ) շարժական գույքի համար՝ հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր երկուշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00 ընկած ժամանակահատվածում:

4.3. Եթե վաճառվող լոտն իրավունք է, ապա Կազմակերպիչը պարտավոր է հնարավորություն տալ մասնակիցներին սույն կանոնակարգի 4.2. կետի ա) և բ) ենթակետում նշված կարգով և ժամկետներում ուսումնասիրելու համապատասխան օբյեկտը, որի նկատմամբ գոյություն ունի իրավունքը, ինչպես նաև համապատասխան իրավահաստատող փաստաթղթերը:

4.4. Պայմանագրով կարող են սահմանվել լոտերին ծանոթանալու ավելի երկար

ժամկետներ:

4.5. Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին. ստուգելով նրանց ինքնությունը. լիազորությունները հաստատող փաստաթղթերը. ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին. ներկայացված մասնակցի վկայականի համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:

4.6. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

## 5. ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՌԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

5.1. Աճուրդները անց են կացվում դասական (գնի ավելացման) կամ հոլանդական (գնի նվազեցման) եղանակներով:

5.2. Աճուրդը անց է կացնում աճուրդավարը, որը հրապարակում է աճուրդի ձևը, գնային հայտեր ներկայացնելու կարգը, լոտի անվանումը, բնութագրող ցուցանիշները, մեկնարկային գինը, աճուրդային նվազագույն քայլի չափը, որը սահմանվում է գույքի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով և կարող է կլորացվել հարյուր դրամի ճշտությամբ մինչև առավելագույն ամբողջ թիվը:

5.3. Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր մասնակցի վկայականի համարին համապատասխանող քարտը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռքբերելու մասին:

Աճուրդավարը շարունակում է աճուրդը այնքան ժամանակ, քանի դեռ չի սնացել առավելագույն գին առաջարկող մեկ մասնակից, որից հետո աճուրդը դադարեցվում է:

Այն դեպքում, երբ հայտարարված գնով լոտը ձեռք բերելու համաձայնություն չի լինում, աճուրդավարը կրկնում է մեկնարկային գինը: Լոտը մեկնարկային գնով (հոլանդական աճուրդի դեպքում՝ նվազագույն գնով) երեք անգամ առաջարկելիս գնորդների բացակայության դեպքում տվյալ լոտի աճուրդը համարվում է չկայացած:

5.4. Դասական աճուրդի դեպքում յուրաքանչյուր մասնակից կարող է լոտի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով, բարձրացնելով մասնակցի վկայականի համարին համապատասխանող համարը (քարտը):

Աճուրդավարը շարունակում է աճուրդն այնքան ժամանակ, քանի դեռ չի սնացել առավելագույն գին առաջարկած մեկ մասնակից, որը համարվում է աճուրդում հաղթած մասնակից՝ աճուրդավարի կողմից առաջարկված գինը երրորդ անգամ հայտարարելու և մուրճիկի երրորդ հարվածից հետո:

5.5. Հոլանդական աճուրդի դեպքում աճուրդավարի կողմից մեկնարկային գինն իջեցվում է այնքան, մինչև մասնակիցներից մեկը բարձրացնելով իր մասնակցի վկայականի համարին համապատասխանող քարտը, տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռքբերելու մասին և աճուրդավարի կողմից անմիջապես համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

5.6. Հոլանդական աճուրդի ժամանակ վաճառքի գինը չի կարող իջեցվել մեկնարկային գնի 50 տոկոսից, սակայն ոչ պակաս, քան լոտի հաշվեկշռային արժեքի 30 տոկոսը:

5.7. Դասական աճուրդի ժամանակ, եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային

հայտ չի ներկայացվել, սպա աճուրդավարը վիճակահանությամբ որոշում է աճուրդում հաղթող համարված մասնակցին, եթե գործող օրենսդրությամբ աճուրդի մասնակիցներից որևէ մեկը աճուրդի ժամանակ առաջարկված հավասար գնային պայմանների դեպքում չունի տվյալ գույքը ձեռք բերելու նախապատվության իրավունք:

5.8. Վիճակահանությամբ աճուրդում հաղթող համարված մասնակցի որոշումը կատարվում է հետևյալ պայմաններով.

Աճուրդավարը հայտարարում է միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին, այնուհետև մասնակիցների մասնակցի վկայանքանին համապատասխան համարը պարունակող քառածալ թղթերը դրվում են ծրարների մեջ և լցվում ոչ թափանցիկ արկղի մեջ: Աճուրդում հաղթող մասնակից է համարվում այն մասնակիցը, որի մասնակցի վկայականին համապատասխանող համարը աճուրդավարը առաջինն է հանում արկղից:

5.9. Հոլանդական աճուրդի ժամանակ, եթե մեկից ավելի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, սպա աճուրդավարը որոշում է միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին և այդ մասնակիցների միջև իրականացվում է դասական աճուրդ՝ նրանց կողմից առաջարկված գինն ընդունելով որպես մեկնարկային գին: Եթե մեկնարկային գնից բարձր առաջարկներ մասնակիցները չեն ներկայացնում՝ աճուրդում հաղթած մասնակից է համարվում սույն կանոնակարգի 5.8. կետով սահմանված պայմաններով վիճակահանությամբ ընտրված մասնակիցը, եթե չկա տվյալ գույքը ձեռք բերելու նախապատվության իրավունքով օժտված մասնակից:

5.10. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը և Կազմակերպիչը ստորագրում են աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը, որից մեկը, հաղթողի կողմից լրիվ վճարումները կատարելու դեպքում, Կազմակերպիչը երեք օրվա ընթացքում տրամադրում է հաղթողին:

5.11. Եթե աճուրդի հաղթող ճանաչված անձը արձանագրության վերաբերյալ առարկություններ ունի, սպա դրանք նշվում են արձանագրության մեջ:

## 6. ԼՈՏԲ ԳԻՆԸ

6.1. Լոտ(եր)ի գինը սահմանվում է ավագանու որոշմամբ:

6.2. Լոտ(եր)ի գինը չի կարող պակաս լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերից: Անշարժ գույքի բացառությամբ հողամասերի/ աճուրդ-վաճառքը կարող է իրականացվել միայն լիցենզավորված կազմակերպության կողմից այն գնահատվելուց հետո: Շնորհիվ, մեկնարկային գին սահմանելիս, եթե գույքի գնահատված արժեքը փոքր է դրա հաշվեկշռային արժեքի 30 տոկոսից, սպա ավագանին մեկնարկային գին է սահմանում գույքի հաշվեկշռային արժեքի 30 տոկոսից ոչ պակաս գումարը:

## 7. ԼՈՏԻ ԳՆԻ ՎՃԱՐՈՒՄԸ

7.1. Աճուրդի մասին հրապարակային ծանուցմամբ, ժամկետ սահմանված չլինելու դեպքում աճուրդում հաղթող ճանաչված անձը արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտ(եր)ի գինը:

Աճուրդում հաղթող ճանաչված անձին տրվում է վճարման հանձնարարագիր, երկու օրինակից, որոնցից մեկը մնում է Կազմակերպչի մոտ, ընդ որում նախավճարը

հաշվարկվում է հաղթողի կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

Աճուրդում հաղթող ճանաչված անձը վճարման հանձնարարագրում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է հանձնարարագրում նշված հաշվին կամ դրամարկղ և վճարման անդորրագիրը ներկայացնում Կազմակերպչին:

7.2. Եթե հրապարակային ծանուցմամբ նախատեսվել է աճուրդում հաղթող համարված մասնակցի կողմից տեղում. 30 րոպեի ընթացքում, իր առաջարկված գնի առնվազն 5 տոկոսի չափով գումարի վճարում. ապա նշված գումարը նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ: Մեկից ավելի լոտ ձեռք բերելու դեպքում նախավճարը հաշվարկվում է ամենաթարձք վաճառքի գին ունեցող լոտի վճարման ենթակա գումարի մեջ:

7.3. Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը չի կատարում 6.2. կետի պահանջները, ապա նա գրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից և դուրս է հրավիրվում: Այդ դեպքում տվյալ լոտ(եր)ի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից: Աճուրդը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ սուկա են տվյալ լոտի գնորդ(ներ) և համարվում է չկայացած ոչ մի գնորդ չլինելու դեպքում:

Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը կատարում է 6.2. կետի պահանջները, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող և Կազմակերպչի հետ միասին ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

7.4. Սահմանված ժամկետում վճարումների չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից մուծված նախավճարը (ինչպես նաև 6.2. կետում նշված վճարված գումարը) չի վերադարձվում և տնօրինվում է Կազմակերպչի կողմից, իսկ լոտ(եր)ի աճուրդը համարվում է չկայացած:

7.5. Աճուրդում գոյացած գինը, նվազագույն աշխատավարձի հիմնադրույթի չափը չգերազանցելու դեպքում, վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը:

7.6. Լոտի գնման գնի վճարման պարտավորությունը ենթակա չէ հաշվանցման:

7.7. Կազմակերպիչը աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի գրավոր դիմումի հիման վրա նախավճարը վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին. բացառությամբ 6.3. կետում նշված դեպքի: Հակառակ դեպքում նախավճարի գումարը մնում է Կազմակերպչին:

## 7.ԱՆՎԱՎԵՐ ԱՃՈՒՐԴՆԵՐԸ

7.1. Լոտի վերաբերյալ աճուրդն . շահագրգիռ անձի պահանջով անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենսդրական ակտերի և սույն կարգի պահանջների խախտման դեպքում:

7.2. Լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

7.3. Աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր աճուրդը կազմակերպվում և անցկացվում է սույն կանոնակարգով սահմանված կարգով:

5. Լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր աճուրդի պայմանները կարող են փոփոխվել. եթե աճուրդի անվավերությունը կապված է եղել նախնական որևէ պայմանի հետ. ինչպես նաև եթե տեղի է ունեցել լոտի վիճակի փոփոխություն, այդ թվում՝ կապված դրա վերաբերյալ իրավունքների և

պարտականությունների փոփոխման հետ:

## 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Կազմակերպիչը պարտավոր է վայել փաստաթղթային գրաստումներ և պահպանել աճուրդի հետ կապված փաստաթղթերը (պայմանագրերը, արձանագրությունները և այլն) աճուրդի ավարտից 3 տարվա ընթացքում:

8.2. Կազմակերպիչը պարտավոր է ապահովել լրտերի պահպանումը, եթե Առաջարկողի և Կազմակերպչի միջև կնքված աճուրդի մասին պայմանագրով նախատեսված են պահատվությանը վերաբերող դրույթներ:

8.3. Աճուրդի անցկացման պայմանագրի գործողության ժամկետը համարվում է ավարտված, իսկ աճուրդի անցկացման ծառայությունը մատուցված, լրտ(եր)ի վաճառքից ստացված գումարը Առաջարկողին փոխանցելու (աճուրդը կայանալու, դադարում) և աճուրդների արդյունքների ամփոփ արձանագրությունը(ները) Առաջարկողին ներկայացնելու պահից:

## 9. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄՆ ՌԻՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՅՈՎ

9.1. Հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է՝

ա) Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում, ինչպես նաև էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և համապատասխան գծային ենթակառուցվածքների, ցանկացած այլ բնական մենաշնորհային ոլորտի հիմնական գործունեությանն առնչվող օբյեկտների (շենքեր, շինություններ, այլ օժանդակ կառույցներ) կառուցման համար հողամասերի սրամադրման դեպքում:

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ բնակելի շենքերը, շինությունները բնակելիի վերափոխելու արդյունքում ձևավորված բնակելի տների պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերն օտարելիս:

գ) գոյություն ունեցող բնակելի, հասարակական, արդյունաբերական և այլ նշանակության օբյեկտների, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման համար, եթե հնարավոր չէ լրացուցիչ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով:

9.2. Հողամասերի ուղղակի վաճառքի գինը սահմանվում է, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված հողամասերի, որոնք օտարվում են հողամասի՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Եղեգնուտ, 1Փ 9Շ ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8. Հուլիսի 2016թ.

ԹԻՎ 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման (այսուհետ՝ գույքի վարձակալության) կանոնակարգը համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի սեփականություն հանդիսացող ոչ քնակելի տարածքների համար գանձվող վարձավճարները համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	ԿՈՂՄ(5)	ԳԵՄ(0)	ՁԵՌՆՊԱՀ(0)
Է. Աբրահամյան		-----	/ ստորագրություն/-----
Ա. Խաչատրյան		-----	/ ստորագրություն/-----
Մ. Կարապետյան		-----	/ ստորագրություն/-----
Վ. Մարգարյան		-----	ստորագրություն/-----
Ա. Ռաշոյան		-----	/ ստորագրություն/-----

Համայնքի ղեկավար Ռ. Մարգարյան

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզի  
Եղեգնուտ համայնքի ավագանու  
2016 թ-ի հուլիսի N 28-Ա որոշման

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՃԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կանոնակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման (այսուհետ՝ գույքի վարձակալության) կանոնակարգը:

2. Գույքի վարձակալության դեպքում բացի գույքի վարձավճարի չափից այլ չափանիշներ եկթակա չեն սակարկման:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման նպատակով համայնքի ղեկավարին ներկայացված հայտի ընդունման (չմերժելու) դեպքում, գույքի վարձակալության տրամադրման մրցույթի անցկացման վերաբերյալ առաջարկությունը ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը:

4. Գույքի վարձակալության մրցույթը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կանոնակարգին համապատասխան կազմակերպում և անցկացնում է մրցութային հանձնաժողովը /մրցույթի կազմակերպիչը/:

**II. ՄՐՅՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ**

5. Կազմակերպիչ պետք է լինեն առնվազն 5 հոգի:

6. Համայնքի ղեկավարի կողմից սրված գույքի վարձակալության մրցույթ կազմակերպելու վերաբերյալ համապատասխան հրահանգը ստանալուց հետո կազմակերպիչը հինգ աշխատանքային օրվա ընթացքում հատուտում է գույքի վարձակալության մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցման տեքստը և համապատասխան զեկուցագրով ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ հրապարակելու համար:

7. Սույն կանոնակարգի 6-րդ կետում նշված մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված ժամկետում կազմակերպիչը ընդունում է մրցույթի մասնակցության հայտերը . կազմում և անցկացնում է գույքի

վարձակալության մրցույթը, ինչպես նաև որոշում գույքի վարձակալության մրցույթի հարթոլին:

8. Կազմակերպչի գործունեությունն իրավագոր է կազմակերպչի անդամների թվի 2/3-ի մասնակցության դեպքում: Մրցույթին մասնակցող անդամների թվի 2/3-ից պակաս լինելու դեպքում կազմակերպչի գործունեությունն իրավագոր չէ, որի մասին տեղեկացվում են մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված ժամկետներում մրցույթի մասնակցության հայտ ներկայացրած բոլոր անձինք:

9. Կազմակերպչին իրավասու է գույքի վարձակալության մրցույթի արդյունավետ իրականացման նպատակով գույքի վարձակալության մրցույթը նախապատրաստելու և կազմակերպելու համար ընդգրկել մասնագիտացված կազմակերպություն(ներ) (համաձայնության):

10. Կազմակերպչի գործունեությունը համարվում է դադարած մրցույթի վերջնական արդյունքներն ամփոփելուց և այդ մասին արձանագրություն կազմելուց և համայնքի ղեկավարին ներկայացնելուց հետո:

### III. ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

11. Գույքի վարձակալության մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցումը պետք է հրապարակվի մրցույթի անցկացման օրվանից առնվազն 15 օր առաջ:

12. Գույքի վարձակալության մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) մրցույթի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը.

2) մրցույթի կազմակերպչի անունը (անվանումը).

3) մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն).

4) մրցույթի ձևը և անցկացման կարգը.

5) մրցույթի պայմանները, այդ թվում՝ լոտի (լոտերի) անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, եթե լոտն առարկա է, ապա նրա ֆիզիկական վիճակը(մաշվածությունը) և (կամ) արտադրման տարեթիվը, լոտի մեկնարկային գինը, լոտի իրավունք լինելու դեպքում՝ այդ իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև էական այլ պայմանները.

6) մրցույթի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, մասնավորապես.

ա. նախավճարի մուծումը հաստատող փաստաթուղթը (անդորրագիրը).

բ. իրավաբանական անձանց համար՝ գրանցման և հիմնադիր փաստաթղթերի պատճենները, իսկ քաղաքացիների համար՝ անձնագրի և սոցիալական քարտի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

գ. հայտատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը).



7) մրցույթում հաղթողին որոշելու կարգը.

8) կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները.

9) լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը.

10) ընդհանուր մրցույթի դեպքում՝ լոտերի մրցույթի հերթականությունը.

11) մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը.

12) մրցույթի մասնակցության նախավճարների չափը (մասնակցության նախավճարի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշմամբ սահմանված կարգի 2-րդ կետի համաձայն հաշվարկված՝ գույքի (տարածքի) առնվազն մեկ ամսվա վարձավճարի նվազագույն չափով, կիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470 որոշմամբ սահմանված գործակիցները կամ տվյալ պահին առկա շուկայական սակագները), ինչպես նաև նախավճարի վճարման կարգը և ժամկետները. մրցույթում հաղթող չճանաչվելու դեպքում նախավճարի հետ վերադարձման կարգը:

Մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ կարող են սահմանել լրացուցիչ փաստաթղթեր:

13. Գույքի վարձակալության մրցույթի մասնակցության հայտերի ընդունումը դադարում է գույքի վարձակալության մրցույթի սկսելուց 1 (մեկ) աշխատանքային օր առաջ ժամը 13.00-ին:

14. Գույքի վարձակալության մրցույթի պայմանների փոփոխման դեպքում կազմակերպիչը օրենքով սահմանված կարգով պարտավոր է անհապաղ կատարել մրցույթի մասին հրապարակային ծանուցման համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ այն ձևով. ինչպես կատարվել է գույքի վարձակալության մասին մրցույթի հրապարակային ծանուցումը: Հրապարակային ծանուցման փոփոխությամբ թույլատրվում է կատարել լրացում, եթե դրանով չեն փոփոխվում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Գույքի վարձակալության մրցույթի էական պայմանների փոփոխման դեպքում անհրաժեշտ է կատարել նոր հրապարակային ծանուցում՝ նախկին ծանուցումը հայտարարելով չեղյալ:

#### **IV. ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ**

15. Գույքի վարձակալության մրցույթի մասնակցության հայտերը ներկայացվում են գույքի վարձակալության մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցման մեջ նշված հայտերի ընդունման ժամկետում:

16. Գույքի վարձակալության մրցույթի մասնակցության հայտերը՝ մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով, ներկայացվում են անձամբ կամ փոստով՝ պատվիրված նամակով:

17. Գույքի վարձակալության մրցույթի հայտատուները հրապարակային ծանուցմամբ սահմանված կարգով, չսփռվ ու ժամկետներում մուծում են գույքի վարձակալության մրցույթի մասնակցության նախավճար՝ այդ նպատակով բացված մրցույթի մասնակցության նախավճարի դրամային հաշվին:

18. Գույքի վարձակալության մրցույթին մասնակցության իրավունք ձեռք բերած սուբյեկտները գնում են մասնակցի տոմս. որում նշված համարով հանդես են գալիս մրցույթում:

19. Գույքի վարձակալության մրցույթի մասնակից չհամարվող անձանց համար կարող են վաճառվել դիտորդի տոմսեր:

20. Գույքի վարձակալության մրցույթի մասնակցի տոմսերի վաճառքը դադարեցվում է գույքի վարձակալության մրցույթի սկզբից երկու ժամ առաջ, իսկ դիտորդի տոմսերի վաճառքը շարունակվում է մինչև գույքի վարձակալության մրցույթի սկսվելը:

21. Գույքի վարձակալության մրցույթին կարող են մասնակցել հայտ ներկայացնողները կամ նրանց կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված անձինք:

22. Գույքի վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված հայտատուի նախավճարն ընդգրկվում է մասնակցի կողմից առաջարկված վարձավճարի մեջ:

23. Մրցույթի արդյունքների ամփոփման մասին արձանագրությունը ստորագրելուց հետո կազմակերպիչը գույքի վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված անձին տրամադրում է լոտի գինը վճարելու համար հանձնարարագիր /այսուհետ՝ հանձնարարագիր/. որը ստանալուց հետո հաղթող ճանաչված անձը 1 (մեկ) ժամվա ընթացքում վճարում է իր առաջարկած երեք ամսվա վարձավճարի և նախավճարի տարբերություն կազմող գումարը, ընդ որում՝ սույն կետով սահմանված ժամկետում վճարումը չկատարելու դեպքում տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից, իսկ գույքի մրցույթը վերսկսվում է մեկնարկային գնից:

24. Եթե հանձնարարագիրը ստանալուց հետո հաղթող ճանաչված անձը չի վճարում լոտի գինը սույն կանոնակարգի 23-րդ կետում նշված ժամկետում, սույն հաղթող ճանաչված անձի կողմից մրցույթին մասնակցելու համար վճարված նախավճարը /այսուհետ՝ նախավճար/ չի վերադարձվում, իսկ մրցույթը համարվում է չկայացած:

25. Գույքի վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցները 10-օրյա ժամկետում կարող են դիմել գյուղապետարան՝ մրցույթի մասնակցության նախավճարի վերադարձման համար, որից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուին տրվում է մրցույթի մասնակցության նախավճարի հետ վերադարձման հայտ: Սահմանված ժամկետում դիմում չներկայացնելու դեպքում գույքի վարձակալության մրցույթի մասնակցության նախավճարը փոխանցվում է համայնքի բյուջեի համապատասխան հաշվին:

## Վ. ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

26. Գույքի վարձակալության մրցույթն անց է կացնում մրցույթի կազմակերպիչ անդամներից տարիքով ավագը, որը հրապարակում է վարձակալության առաջարկվող գույքը բնութագրող ցուցանիշները. գույքի մեկնարկային վարձավճարի չափը (որը սահմանվում է համայնքի ավագանու կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-րդ N 125 որոշմամբ սահմանված կարգի 2-րդ կետի համաձայն հաշվարկված՝ գույքի (տարածքի) առնվազն մեկ ամսվա վարձավճարի նվազագույն չափով, կիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470 որոշմամբ սահմանված գործակիցները կամ տվյալ պահին առկա շուկայական սակագները), աճուրդային քայլի չափը. որը սահմանվում է գույքի մեկնարկային վարձավճարի չափի 5 տոկոսից ոչ պակաս չափով:

27. Մրցույթի մասնակիցը բարձրացնում է իրեն տոմսին համապատասխանապես համարը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված արժեքով գույքը վարձակալելու մասին:

28. Յուրաքանչյուր մասնակից կարող է գույքի իր կողմից առաջարկվող վարձավճարի չափը ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով, կամ քայլի չափից ոչ պակաս գումարով:

29. Կազմակերպիչը շարունակում է մրցույթն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն վարձավճարի չափն առաջարկված մեկ թեկնածու. որից հետո մրցույթը դադարեցվում է:

30. Գույքի առավելագույն վարձավճարի չափն առաջարկված թեկնածուն Կազմակերպիչի կողմից 3-րդ անգամ առաջարկված վարձավճարի չափը հայտարարելուց հետո ճանաչվում է մրցույթի հաղթող:

31. Կազմակերպիչը 1 (մեկ)-օրյա ժամկետում մրցույթի արդյունքների ամփոփումն մասին կազմում է արձանագրություն: Կազմակերպչի անդամի հաստիկ կարծիք լինելու դեպքում այն ներկայացվում է գրավոր, որը կցվում է արձանագրությանը և հանարվում է դրա անբաժանելի մասը:

32. Կազմակերպիչը գույքի վարձակալության մրցույթի արդյունքների մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ ներկայացնելով մրցույթի արդյունքների մասին կազմված արձանագրությունը:

33. Կազմակերպչին մրցույթի մասնակիցների մասին հայտնի դարձած տեղեկությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ենթակա չեն հրապարակման՝ առանց մրցույթի մասնակիցների համաձայնության:

VI. ԳՈՒՅՔԻ ՎԱՐՃԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ԿԱՄ ԱՆՎԱԿԵՐ  
ՃԱՆԱՉԵԼԸ

34. Գույքի վարձակալության մրցույթը համարվում է չկայացած, եթե՝

1) մրցույթի մասնակցության համար ոչ մի հայտ չի ներկայացվել,

2) բացակայում է գույքը մեկնարկային վարձավճարի չափով վարձակալելու համաձայնությունը.


3) գույքի վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված անձը (կամ նրա լիազորված ներկայացուցիչը) սահմանված ժամկետներում գույքի վարձակալության մրցույթի արդյունքների արձանագրությունը չի ստորագրել, հետագա վճարումները չի կատարել.

4) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

35. Մրցույթն անվավեր կարող է ճանաչվել դատական կարգով: Դատական կարգով մրցույթն անվավեր ճանաչելը հանգեցնում է մրցույթի արդյունքների հիման վրա կնքված պայմանագրի անլավերությանը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի  
Եղեգնուտի համայնքապետարանի  
աշխատակազմի քարտուղար

Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ




Հավելված 2

Հաստատված է  
Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզի Եղեգնուտի  
համայնքի ավագանու 2016 թ. -ի  
հուլիսի 8-ի N-28-Ա որոշմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ  
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Հ/հ	Անվանումը	Ժամանակահատվածը	Դրույքաչափը (ՀՀ դրամ)
1	հիմնական օբյեկտների համար  /1 ք.մ.համար/	ամսական	200 /կարող է ավագանու կողմից մեծացվել/
2	մինչև 6 քմ տարածք զբաղեցնող ժամանակավոր (ոչ հիմնական) շինությունների համար /1 ք.մ./համար/	ամսական	200/կարող է ավագանու կողմից մեծացվել/
3	6 քմ և ավելի տարածք զբաղեցնող ժամանակավոր (ոչ հիմնական) շինությունների համար/1 ք.մ./համար/	ամսական	150/կարող է ավագանու կողմից մեծացվել/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի  
Եղեգնուտի համայնքապետարանի  
աշխատակազմի քարտուղար



Ս. Ալեքսանյան